


5929

Устье р. Р


Чигириевка?

9(47.925)  
u-77



(ՅՈՒՆԻՏ ՊԵՐՈԿԱՇԱՅ ՓԵԽԱՑԱԿԵՆՆԵՐԻ)

W63 ան



# ԿՈՏՈՐԱԾԸ ՍԱԼՄԱՍՈՒՄ

(Ականատեսի Պատմութեա)

Կազմեց  
Իրաւ. Սեղրակ Աւգեանց

Արտաստավ. «Հովհան» շաբաթաթերթից

Գիրք և 15 կոպ.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ՀԵՐՄԵՆ» Գրաֆիկայա փող. № 6.

1915

323.1(91.542)  
Ա-77

3929

2011 - 08

(ՅՈՒՆԻՏԱՐ ՊԱՐՈՒԿՈՎԸ ՓԵԽՈՏԱԿԵՆՆԵՐԻ)

5 (97.925)


Q-77

24 JAN 2006

# ԿՈՏՈՐԱՆԵ ՍԱԼՄԱՏՈՒՄ

(Ականատեսի Պատմուածք.)

1006  
29296




Գիրք է 15 կտոր.

Թ Ի Ֆ Լ Ի Ւ

Տպարան «ՀԵՐՄԵՍ» Գրաֆիկայա փող. № 6.

1915



19.02.2013

000-1103

ՅՈՅԾ ԽԱԼ ՀՀ

Աւրագատականի դժբախտ հայերի

Անձնութաց Հովհաննես

ԹԵՐՄԿԱՆ ՆԵՐՍԻՍ ԵԳԻՍԿ.

ՄԵԼԻՔ ԹԱՆԳԵԱՆԻՆ

Անկեղծ սրտով

Նվիրում է աշխատասիրողը.

## ԿՈՏՈՐԱՇԸ ՍԱԼՄԱՍՏՈՒՄ.

(Ականատեսի պատմուածք)։

### I.

1914 թւի դեկտեմբերի վերջերն էր։ Երբ ոռւսական զօրքը հեռացաւ Սալմաստից, վիշտը պատեց բոլոր Սալմաստում մնացած քրիստոնեաներին։ Ահ ու սարսափը այնքան մեծ էր, որ մենք չէինք կարողանում անցնել մի գիւղից միւս գիւղ։ Թւում էր ամեն ինչ յանկարծակի մեռաւ, ամայացաւ, ու անյայտացաւ... Մեզանից շատերը չկարողացան փախչել, նախ որովհետև միջոցներ՝ չունէինք, երկրորդ՝ շատ տներում կային զառամեալ ծերունիք ու պառաւներ, որ չէին կարող ոտով անցնել Սալմաստից Խոյ, ուր մնաց յուսային հասնել Զուլֆա։ Բայց չէ որ մենք, մեր պապերը տասնեակ ու հարիւրաւոր տարիներ ենք ապրել, պահել պահպանել մեր օջախը, տունը եկեղեցին, գերեզմանատունը... Ճշմարիտ է, թէև մենք մնացողներս վախենում էինք, բայց և այնպէս յոյսներս դրել էինք միակ Աստուծոյ վրայ, որ ինչպէս փրկեց իսրայէլացիներին Փարաւոնի ձեռքից, կը փրկէր նոյնպէս և մեզ տաճկի ու քրդի ձեռքերից։

Երեք օր էր անց ոռւսական զօրքի նահանջից յետոյն Ես բարձրացայ գիւղի ամենաբարձր կտուրը,

այնտեղից երևում էր, թէ ինչպէս հայ գիւղերը ծխում են, մտքովս անցաւ, որ մի գուցէ քրդերը արդէն եկել են և սկսել թալան-կոտորածը։ Սակայն, փողոցում ծանօթ պարսիկներից մէկի հետ պատահելիս ես հաւաստիացայ, որ առայժմս ոչ քուրդ, ոչ տաճիկ չեն երևում, որովհետև՝ յայտնեց պարսիկը, մահմեդական-ները վերջնականապէս համոզուած չեն, որ վաղը կամ միւս օր ոռւսը չի վերադառնայ։ Միւս կողմից պարսիկների մէջ յամառ լուրեր էին պտտում, որ հայ կամաւորները շատ հեռու չեն գնացել և երկիւղ կայ, մի գուցէ նոքա յանկարծակի վերադառնան Խոյից և սկսել են կոռւել քրդերի ու տաճիկների հետ։ Այդպիսի լուրեր թոյլ չտուեցին, որ քրդերը կամ հետախուզող տաճիկները անմիջապէս ներս խուժեն Սալմաստ, ինչպէս որ մենք երկիւղով սպասում էինք։ Ուակայն պարսիկ ամբոխը կարծես թէ արհեստօրէն տարածում էր զանազան լուրեր, որպէսզի հնարաւորութիւն ունենայ ուշացնել միքանի օրով բարբարոսների խուժումը և դիւրութիւններ ստեղծի հայի մնացած գոյքերի թալանը պարսիկների կողմից։

Մութ գիշեր էր այդ գիշեր։ Մենք մտածում էինք այն մասին, թէ ինչպէս փրկենք մեր կեանքը։ Ամենալաւ միջոցը, ըստ երևոյթին, այն էր, որ ձեռք վերցնէինք մեր ամեն գոյքից, ամեն ունեցածից և հեռանայինք այնտեղ, ուր մեր մնացած հայ եղբայրները խմբւում էին։ Ուրիշ ճար չկար. մնալ առանձին գիւղերում դա նշանակում էր՝ զրկուել փրկութեան ամենավերջին յոյսից և օր առաջ քրդի զէնքին զոհ դառնալ։ Իսկ Դիլմանում մեզանից իւրաքանչիւրն ունէր ծանօթ պարսիկ, որոնց օթևանում կարծում էինք ապահով ապաստարան գտնել։ Եւ ահա ահ ու դողով

անց կացնելով չորս գիշեր մեր հայրական կտրի տակ,  
հինգերորդ օրը առաւօտեան կանուխ վեր կացանք մեր  
տեղից, ամուր կողպեցին դռները, Աստծուն յանձնե-  
ցինք մեր բոլոր իրերը և աղի արցունք թափելով  
հեռացանք գիւղաքաղաք։ Սակայն լքուած սիրտը թե-  
լաղրում էր մեզ մի անախորժ, չարագուշակ համբաւի  
մասին։ Ճանապարհին մենք հանդիպեցինք երկու  
պարսիկի, որ իրենց զարմանքը յայտնեցին մեզ, թէ  
ինչպէս վստահացել ենք մասլու այն գիւղում, որ ըստ  
հաստատ տեղեկութիւնների շրջապատուած է եղել  
զինուած քրդերով, բանից դուրս եկաւ, որ իսկապէս  
մեր գիւղը պաշարուած է եղել, բայց քրդերը կաս-  
կածելով որ մեր մէջ ֆիդայիներ կան, չեն համար-  
ձակուել ներս խուժել։

Հազիւ հեռացել էինք գիւղից կէս ժամուայ  
տարածութեամբ, երբ լսեցինք հրացանների համազարկ։  
Մենք շտապեցինք, մօտ տաս ըոպէ վազ տուինք Դիլ-  
մանի ուղղութեամբ, ուրը բարեբախտարար այնքան էլ  
հեռու չէր։ Երբ կիսամեռ դրութեամբ հասանք գիւղա-  
քաղաքի արտաքին դռանը, իմացանք, որ Սալմաստի  
բոլոր գիւղերից հայ ու ասորի արդէն փախել, մտել  
են Դիլման և սարսափով սպասում են այն ըոպէին,  
երբ քրդական հրոսակները պիտ գրաւեն յիշեալ  
կենտրոնից։ Մինչ այդ, մենք ընդունելութիւն գտանք  
մեր ծանօթ մանրավաճառ պարսկի տանը, ուրը մեր  
մի մասը յանձնեց իր հարևանին, խոստանալով նրան  
որոշ վարձատրութիւն։ Թէ ինչպիսի աղէտալի տեսա-  
րան էր այդ ըոպէին մեր խմբուած հայերիս համար-  
նկարագրելը ծանր է։ մենք զուրկ էինք վերմակից,  
հացից, ջրից, իսկ օգտուել պարսիկի անօթներով,  
ապրել նրա օթևանի տակ, գիտէք ինչքան զժուար

էր մեզ համար... ինչ արած, ակամայից ողբում էինք մեր բախտը, արտասուքով ու հառաջանքով էինք հագեցնում մեր քաղցն ու ծարաւը և սպասում նախախնամութեան հզօր ու փրկարար ոյժին:

Ես համոզուեցի, որ այդպիսի մի չարքաշ կացութեան մէջ ինձ կարող է փրկել միմիայն մի բան, այն է՝ փոխել զգեստս, ձեանալ պարսիկ և շրջել բազարը իմանալու, թէ ինչ է կատարւում այնտեղ: Իմ այդ միտքը հաւանութիւն գտաւ հիւրընկալ պարսկի մէջ. Նա տուեց ինձ իր հնացած, մաշուած աբան և պարսկական մազեայ փոլոզը (գլխարկ), ինձ անուանեց Հուսէյն կուլի, որը իրը թէ նրա Գիւնէյի բարեկամներից է, եկել է նրա մօտ հիւր միքանի օրով: Այդ գաղտնիքին յարատեսութիւն տալու համար ես խոստացայ իմ և իմ ընկեր հայերի փրկութեան համար մեծ վարձատրութիւն, ածիլեցի երեսս, փոխեցի կոշիկներս, վերջապէս դարձայ կատարեալ պարսիկ և այն ժամանակ, երբ բոլոր քրիստոնեաները ահաբեկուած թագ էին կացել իրենց վիճակուած մառաններում, ամբարներում և այլ գետնափորիներում, ես համարձակօրէն դուրս եկայ բազար, դիտելու, թէ ինչ է այնտեղ կատարւում և ինչ նոր լուրեր կան:

Երեկոյ էր: Արել իր վերջին ճառագայթներով տաքացրեց մեր սառած ձեռքերը և անյայտացաւ, մատնելով մեզ մօտալուտ զիշերուայ խաւարին: Ուր գնայի, եթէ ոչ պարսկական դայվան, ուր ամեն տեսակ անհիմն ու երևակայական լուրեր, հեռագրեր և այլ տեղեկութիւններ կուտակուած կը լինէին: Ես մտայ պարսիկ դայվան, մօտեցայ այնտեղ մի խումբ դալիան ծխողների, բարեկեցի նրանց պարսկական ձեռվ, ծալապատիկ նստայ նրանց մօտ և պահանջեցի թէյ:

Բարեբախտաբար ծանօթ անձնաւորութիւններ չկային  
և ես հնարաւորութիւն ունեցայ նոյնիսկ մտքերի  
փոխանակութեան մէջ մտնել իմ երկարամորուք հա-  
մախօսակցի հետ։ Ի միջի այլոց, ես իմացայ, որ պար-  
սիկները, այսպէս կոչուած մուջահիդները, (յեղափո-  
խականները) յատուկ պատգամաւորներ են ուղարկել  
քիւրդերին ու տաճիկներին, յայտնելով, որ սառի  
զեավուրը արդէն հեռացել է, որ ոչ մի վտանգ քրիս-  
տոնեաների կողմից չկայ, այլ, ընդհակառակը, պարսիկ  
ազգաբնակութիւնը ժամ առ ժամ սպասում է Օս-  
մանեան միակրօն բանտկի գալստեանը, պատրաստ  
լինելով տալու նրան ամեն հնարաւորը, ամեն մի  
աջակցութիւն։ Ղայվայի իւրաքանչիւր անկիւնից ու-  
րախութեան ու հրճուանիքի տրամադրութիւն էր նկատ-  
ուում. ըստ երևոյթին, բոլոր պարսիկները ուրախ էին  
ոսների հեռանալու առթիւ, որ իբր թէ տեղի ունեցաւ  
երկու մահմեդական պետութիւնների սպառնալիքների  
և առաւելապէս տաճկական «անյաղթ» և «մեծաքա-  
նակ» զօրքի յաջողութիւնների շնորհիւ։ Սրտի կսկի-  
ծով լսում էի ես նոյնպէս և այն պատմութիւնները,  
թէ ինչպիսի թանկագին և հազւագիւտ իրեր են գտել  
պարսիկները հայերի տները թալանելիս, թէ այդ չորս-  
հինգ օրուայ ընթացքում ինչքան հարստութիւններ են  
գանձել Դիլմանը, Սաղաղեանը, Հաբաշին, Ահրէվանը,  
Հին-Քաղաքը ևայլ գիւղեր, ուր ընակչութեան մեծա-  
մասնութիւնը բոլորը պարսիկներ են։ Լսում էի այդ  
բոլորը, սիրտս ճմլուում էր, ակամայից աշխատում էի  
ծածկել յուղմունքս, երբ տեսնում էի իմ սեղանա-  
կիցների բերկրանքը ու անհուն շնորհակալութիւնները  
Աստծուն ու Մարգարէին, որ վերջապէս ազատուեցին  
զեավուրից, նրա լծից, նրա մուզիկից ևայլն ևայլն։

Ուրախութիւնների արտայայտման այդ ըսպէին ես  
հազում էի արհեստականօրէն, ձևանալով հիւանդ և  
այդպիսով թագցնելով այն անախորժ տպաւորութիւնը,  
որ թողնում էին իմ վրայ պարսիկների պատմութիւն-  
ները։

«Եթէ քուրդերը մի երկու օր էլ ուշ գային, աւե-  
լացրեց մեր համախօսակիցը, հայերի գիւղում այլևս  
բան չէինք թողնի։ Մերոնք քանդել և բերել են ամեն  
տեսակի կահ-կարասիք, ցորեն, ալիւր գարի, անասուն,  
փայտ, խալիչա, փալաս անկողին, կարի մեքենաներ  
և այլն, սակայն քրդեիի մասը մեզնից պակաս լինելու  
չէ։ Փառք Ալլահին, այդպիսի դէպքեր հարիւր տարի-  
ների ընթացքում միմիայն մի անգամ է պատահում,  
թող մահմեղականը այլևս դարդ չանի, նա ապահով-  
ուած է առնուազը քսան տարով։ Աստուած ինքը  
գեավուրի մալը մեզ հալալ է արել»։

Ես վերականգնացրի իմ հազը և հրաժեշտ տալով  
թալանասէր խօսակիցներիս դանդաղ քայլերով հեռա-  
ցայ դայվից դէպի կացարանս։ Ճանապարհին իմացայ,  
որ մի խումբ լրտես քրդեր երեկոյեան մեկնեցին  
դէպի Օսմանեան բանակը տեղեկութիւններ հասցնե-  
լու վախկոտ տաճկին Սալմասահ դրութեան մասին։

Երբ վերադարձայ տուն, գտայ ընկերներիս պառ-  
կած։ Ես ևս պառկեցի մեր օթևանի անկիւնում, բայց  
երկար ժամանակ չէի կարողանում քնել. Մտքերս ինձ  
պատել էին։ Երևակայութիւնը, մոայլ պատկերներ և  
օրուայ տպաւորութիւններն ինձ արտասուքների էին  
մատնել…

Միւս օր առաւօտեան ես վեր կացայ շատ վաղ.  
մեր տանուտէր պարսիկը տրդէն ոտքի վրայ էր։ Ես  
նրան պատահեցի դռան շէմքում. նա ինձ յայտնեց,

որ օսմանցոց զօրքը և հաղարաւոր քուրդ բաշիբօղուկներ արդէն լցուեցին Դիլման։ Նրա առաջարկութեամբ ես շուտափոյթ հազնուեցի իմ նոր տարագով, լուացուեցի և շտապեցի բազար։ Պարսիկ ամբոխը, բաղկացած համարեա թէ գիւղաքաղաքի ամբողջ բնակչութիւնից՝ զնացել էր ընդառաջ տաճիկներին իմ դէմ բացուեց մի տարօրինակ տեսարան։ դեռ զօրք չէր մտել աւաղափուի դռներից, զինուած քրդերը հետեւում էին շէյխին, որը սրբազան պատերազմի դրօշակը ձեռքին բռնած խրախուսում և քաջալերում էր ոչ թէ միայն վայրենի ու արիւնոուշտ քրդերին, այլև պարսիկներին, որոնք անդադար գոռում գոչում էին՝ «Ետշասն իսլամ» (կեցցէ իսլամականութիւնը), «շուքը Ալլահա» (փառք Աստուծոյ) ևայլն։ Քրդերին հետեւում էր մօտ մի վաշտ կանոնաւոր օսմանական զօրք, որը գալիս էր Հին-Քաղաքի վրայով Զաւզադ փաշայի (զեկավարութեամբ։ Ինչ վերաբերում է քրդերին, նոքա ևս իրենց հրամանատար Շարաֆ-աղայի, Թամր-Զանգոյի, Օմար խանի և ուրիշների միջոցաւ եկել էին տաճկական զօրքի հետ Դիլման, թալանելով բոլոր այն գիւղերը, ուր ապրում էին հայեր, որոնք այժմս վախից խմբուած էին գիւղաքաղաքում իրենց ծանօթ պարսիկների մօտ։

Մօտ մի ժամ տեսց այդ, ըստ Երևոյթին, սրտազին ընդունելութեան և դիմաւորութեան տեսարանը։ Միամիտ պարսիկները անուանում էին տաճիկներին իրենց Փրկիչը, որոնց վիճակուած է վերադարձնել իրանին Պարսկաստանի այն մասը, ուր գեաւուրի անարդ ոտքը իրեն ամուր յենակէտ է գտել և սպառնում է իսլամի գոյութեանը։ Զօրապետը և ղայմաղամը զետեղուեցին յայտնի Հաջի-Վազիրի տանը, զօրքերին

և քրդերին կարգադրեցին մնալ որոշուած տներում,  
իրաւունք չունենալ թալանելու գիւղաքաղաքը և չը  
վիրաւորել Դիլմանում ապաստանած քրիստոնեաներին,  
որոնք թէև գեաւուրներ են, բայց որովհետեւ, ասում  
էր զօրապետի օգնականը, նրանք մեզ հպատակուել  
են, ուստի պիտի բաշխել նրանց կեանքը և թոյլ տալ  
ազատ շրջելու գիւղաքաղաքում, իսկ եթէ նրանք մեզ  
հակառակութիւն ցոյց կը տան, այն ժամանակ կոտո-  
րել անխնայ, որպէս կրօնի և պետութեան թշնամի-  
ների:

Այդ մակերեսոյթային լուրը կայծակի արագու-  
թեամբ տարածուեց հայ և ասորիների մէջ։ Աերջին-  
ների թւում կային շատերը, որ փախչելով Ուրսիայից  
Սալմաստ, հնարաւորութիւն չէին ունեցել հասնել  
ուստաց զօրքին և այդպիսով ստիպուած էին մնալ  
Դիլմանում։ Քրիստոնեաները թէև շատ բան լսում էին  
այդ ազատութեան շնորհման առթիւ, բայց կասկա-  
ծանքով էին վերաբերում նրա ճշգրիտ իրագործմանը։  
Այդ կասկածանքը աւելի ևս ամրապնդում ու հիմք  
էր ստանում նրանով, որ շրջիկ քրդերը շատ վատ էին  
տրամադրուած դէպ քրիստոնէութիւնը, նամանաւանդ  
որ դրանց շարքում կային յայտնի Շարաֆքէյ և  
Թամիր-Զանգօյի քրդերը, որ վաղուց ի վեր իրենց  
յայտարարել են հայերի թշնամի։

Իմ դիմակաւորութիւնը շարունակուեց միմիայն  
երեք օր, տաճիկները գրաւոր յայտարարութիւն կպցըին  
Դիլմանի պատերին, ուր ասուած էր՝ «բոլոր ազգու-  
թիւնները տաճկական օրէնքի առաջ հաւասար են.  
իսկ քրիստոնեաները կարող են ոչ թէ ազատ շրջել,  
այլև պարապել այն արհեստով, որում նոքա ընդու-  
նակ են։ Թող այսուհետեւ իւրաքանչիւր ոք վայելէ

օսմանեան պետութեան ու զօրքի վեհ հովանաւորութիւնը»։ Խրախուսուած այդ աւետումով, ես փոխեցի իմ մահմեղական հագուստը քրիստոնէականով և սկսեցի ազատօրէն շրջել գիւղաքաղաքում ու տեսակցել իմ ծանօթ հայերի հետ։

Դժբաղդաբար պէտք է խոստովանել, որ տաճիկների այդ յայտարարութիւնը զուտ պլատօնիքական էր. նոյն ասկեարը ոչնչով չէր զանազանւում բըդից. Նա նոյնպէս կոպիտ և անբարեացակամ էր դէպի քրիստոնեան, ինչպէս և քիւրդը. Նա նոյնպէս հային անուանում էր գեաւուր, խորշում էր նրանից և ինչպէս քիւրդը, պատրաստ էր կոտորել, սպանել քրիստոնեային, եթէ գոյութիւն չունենային ժամանակաւոր պայմանաւորութիւնները, որ հոչակուած էին «ազատարար» օսմանեան զօրքի հրամանատարի կողմից։ Այդ բանը սակայն լաւ էին հասկացել հրամանատարի բոլոր ստորադրեալները. որ իրենց անձնական օգտի համար աշխատում էին ստեղծել դաւադրութիւններ հայերի դէմ։ Վերջիններս երկու օրուայ ընթացքում ըմբռնեցին տաճկակտն «ազատութիւն» խօսքի իմաստը, նրա լոկ երեակայական լինելը և զգոյշ շրջելով Դիլմանում, ուր հարիւրաւոր պարսիկ մատնիչներ էին երեան եկել, խուսափում էին գիւղաքաղաքից հեռուն գնալ։ Միւս կողմից տաճիկները ամեն ճիդ ու ջանք գործ էին դնում քրիստոնեաներին ցոյց տալու իրենց մարդասիրութիւնը, հաւաստիացումներ էին անում, որ քրիստոնեան համահաւասարօրէն լինելու է օսմանցու հզօր պաշտպանութեան տակ, որ այլևս չկայ ոչ մի զանազանութիւն քըդի, տաճկի, հայի և ասորու մէջ…

Այդ աւետումներին հաւատացնողները միմիայն

մի քանի միամիտ անձնաւորութիւններ էին. մասսան  
նրանց հաւատ չէր ընծայում: Թէև միքանի տաճկահպա-  
տակ հայեր, որ դրօշակներ ունէին բարձրացրած  
իրենց կտրի վրայ, յորդորում էին Դիլմանում խմբուած  
մի բուռն հայերին վերադառնալ գիւղեր, զբաղուել  
իրենց սովորական պարապմունքներով, աչքի առաջ  
ունենալով նամանաւանդ այն հանգամանքը, որ շատ  
անձնաւորութիւններ սկսել էին արդէն շրջել գիւղերը,  
փորձել տէր դառնալու իրենց դատարկուած տների,  
այնուամենայնիւ ժողովուրդը գերադասում էր մնալ  
իր նկուղիներում, մինչև Աստուծոյ ողորմութիւնը  
կը փրկէ նրանց իր հզօր ոյժով: Նմանօրինակ դէպ-  
քերում ժողովրդական ընազդումը աւելի մեծ դեր է  
կատարում, քան արտաքին յորդորանքը և խաբուսիկ  
յոյսը:

Եւ ահա այսպիսի կասկածալից տրամադրութեամբ  
մենք անց էինք կացնում մեր օրերը Դիլմանում.  
տղամարդիքս դուրս էինք գնում բազար հաց ու մը-  
թերքեղէն առնելու մեր ընտանիքների համար. փո-  
ղոցներում, ինչպէս յիշեցի, շրջում էինք անվստահ.  
ապրում էինք համարեա թէ բանտարկեալների նման.  
ով մեզանից մի անգամ լաւ դիտում էր աւազակ քրդի  
դէմքի արտայայտութիւնը, այդ գիշատիչ բազէի ոըլ-  
ուլուն աչքերը, նրա կեռ դաշոյնը, ցցուած մէջքի  
գօտու մէջ, նրա երկայն ու լայն շարվարը, երկար  
թաղիքեայ զլխարկով, որի չորս բոլորը պատած էր  
թաւշեայ սև թաշկինակը, մահաբեր հրացանը ևայլն,  
նա իսկապէս աշխատում էր խուսափել, հեռանալ  
այդպիսի վայրենիներից, լաւ իմանալով, որ իր ան-  
պաշտպան կեանքը և զոյութիւնը մի մազից է կախ-  
ուած...

Պարսիկները իրենց ձևացնում էին տաճիկների ամենահպատակ բարեկամներ։ Սկսած այն օրից, երբ դատաւորի պաշտօն ստանձնեց զօրապետի կողմից յայտնի Միւքարրամը, Դիլմանում տեղի էին ունենում ժողովներ, ուր ներկայ էին լինում տեղացի պարսիկ անձնաւորութիւններ, մուջահիդներ և ժողովրդի այլ տականքներ։ Վերջիններիս պաշտօնը, ըստ երևոյթին կայանում էր նրանում, որ մատնացոյց անեն ղայմաղամին այն անձնաւորութիւնների վրայ, որոնք կամ ոռուսահպատակներ էին կամ յայտնի իրենց անձնանութեամբ ոռուսական շահերի։ Եւ ահա այդպիսի հողի վրայ տեղի էին ունենում բազմազան մատնութիւններ, դաւադրութիւններ, զրպարտութիւններ, մի խօսքով հազար ու մի տեսակ բանսարքութիւններ, որոնց ստեղծագործման մէջ այնքան հմուտ և հանճարել է կեղծաւոր արևելեան ոգին։ Հասան-վարիլ անունով մի պարսիկ զբաղւում էր մատնութեամբ, որպէս արհեստով և շնորհիւ այդ մասնագիտութեան գանձում էր մեծ գումարներ։ Այդպիսի երևոյթներին պակաս նիւթ չէին տալիս և այն պարբերական յայտարարութիւնները, որոնք հետևանք էին գիւղաքաղաքում իւրաքանչիւր շաբաթ տեղի ունեցած տաճկապարսկական ժողովների, որ համիսլամական տէնդենցներով էին տոգորուած և հրաւիրում էին բոլոր մահմեղականներին միանալու ընդդէմ կրօնի հակառակ ըրիստոնեանների։ Պարզ է, որ ալդ բոլորը մենք լսում էինք, յայտնում մէկս միւսին և աշխատում միմիայն ծայրահեղ դէպքերում գործ ունենալ այն իշխանատէր պարսիկ ու տաճիկ անձնաւորութիւնների հետ, որոնցից կախուած էր մեր կեանքն ու մահը։

Որպէս օրինակ այդ մատնութիւնների՝ աւելորդ

չի լինի յիշելու միքանի դէպքերի մասին։ Երկու ռուսահպատակների, որոնց կատկածում էին որպէս ռուսաց զօրքի տեղեկատուների Սալմաստից, բանտարկեցին Դիլմանում։ Ի զուր թշուառները աշխատում էին ապացուցել իրենց անմեղ լինելը։ Նրանք մեղաւոր էին նախ՝ որովհետև ռուսահպատակներ էին, երկրորդ՝ նրա համար, որ արդէն մէկ-երկու վկաներ կային պնդող նրանց հակակրօն և հակապետական գործնէութեան վրայ։ Եւ ահա հրամայուեց ի վերուստ ծեծել նրանց մինչ ի մահ։ մասնաւորապէս հրաւիրուած տաճիկները, ինչպէս պատմում են ականատեսները, միմիայն այն ժամանակ հրաժարուեցին ծեծից, երբ համոզուեցին, որ իրենց սեփական ոյժերը հատան, իսկ մահապարտները կորցրին ամեն մի զգայնութիւն, բոլորովին արիւնոտուած, ցեխոտուած և մարդկային նմանութիւնը կորցրած։ Այնուհետև դժբաղդներին ձգեցին հաւուզի (աւազանի) ջրի մէջ և երբ նրանք սթափուեցին, հրամայուեց տանել բանտ և պահել այնտեղ մինչ ի մահ, որովհետև գերազանցւում էր մահամերձ տանջել մէկին ամենասուկալի միջոցներով, քան հրացանի կամ կախաղանի մի հարուածով վերջ դնել նրա մահկանացուին…

Առասպելական ստեր էին հնարում և հայերի դէմ։ Փ. գիւղի ընակիչներից մէկին կասկածել են այն բանում, որ նա գաղտնի կերպով բանակցութիւններ է վարում ռուսական զօրապետի հետ Խօյում։ Մատնիչի յիշողութիւնը դաւաճանել է իրեն. Ենթադրուած անձնաւորութեան տեղ նա ցոյց է տուել մէկ ուրիշի վրայ, որը տանից սրճարան էր եկել տեսնուելու իր ծանօթ պարսկի հետ, յանկարծ զինուած ասկեարը մտնելով սրճարան հրամայում է հային՝ «աղէ էրմանի»։

Վերջինիս տանում են ղայմաղամի մօտ և հարց ու  
փորձի ենթարկում. հայը կատեգորիկ կերպով ժխտում  
է իր մեղաւոր լինելը: Սակայն նրա խօսքերին ոչ ոք  
հաւատ չի ընծայում. հրամայում են հային ծեծել.  
բերում են երկու տախտակ և հրացանի հաստ գլխով  
այնքան խփում են տախտակին ամրացրած թշուառին,  
որ նա միանգամայն շնչառապառ է դառնում. այնուհետև  
բանտարկում են նրան վերոյիշեալ երկու անձնաւո-  
րութիւնների մօտ: Սակայն երեք ժամ անցնելուց  
յետոյ հային դուրս են բերում ասելով, որ սխալուել  
են նրան խալաթ (պարզե) տալու մէջ, որովհետև  
իսկական յանցաւորը գտնուած է. նրան ազատում են,  
բերելով Մհա. Ռուբէն Աջէմեանին, ենթարկում են  
ամենասոսկալի տանջանքների. որոնց առաջ գունատ  
է միջնադարեան հռչակաւոր պատժահնարագիտու-  
թիւնը: Իսկ ի վերջոյ թէ ինչպէս են նահատակում  
այդ անմեղին, դրա նկարագրութիւնը դուրս է գրչի  
ոյժից...

Մեզ հետ աւելի խէթ և կոպիտ էին վարւում  
գլխաւորապէս այն ժամանակ, երբ շշուկներ էին  
պտտում, որ ոռւսները կրկին գրաւեցին Թաւրիզը:  
Մենք նկատում էինք և պարսիկների և տաճիկների մէջ  
մի ինչ որ յուզմունք: Նրանք աշխատում էին ըստ  
երևոյթին, թագցնել օսմանեան «հզօր» բանակի ան-  
զօրանալու լուրը և նրա ջարդը Սօֆեանում: Հնդհա-  
կառակը, նրանք նոր լուրեր էին տարածում խալիֆի  
բանակի հրաշագործութիւնների մասին, Թիֆլիզի,  
Բաթումի և Բագուի գրաւման մասին: Իսկ մենք  
վաղուց արդէն ծանօթ էինք պարսիկի կեղծ և ստայօդ  
լուրեր տարածելու ընդունակութեան հետ: Հսում էինք,  
չէինք հաւատում և միշտ Աստուծուն աղօթք անում,

որ շուտով քաջարի ոռւսական զօրքը մեղ օգնութեան հասնի:

Այդպիսի դժնդակ, սարսափահար, անորոշ դրութեան մէջ մնացինք մինչև փետրուարի 22-ը։ Մենք այլևս չէինք վստահանում ազատ շրջելու նոյնիսկ գիւղաքաղաքում։ Ուղիղ երկու ամիս էր, որ մենք նմանւում էինք հարբածների, մենք կորցրել էինք առողջ դատողութեան ընդունակութիւնը. դեռևս մի տաս օր առաջ գիւղերից մի քանիսում մնացած հայերին պաշտօնապէս հրամայուած էր խմբուել Դիլմանում. Թէև Հաֆթուան գիւղում գտնւում էր օսմանական զօրատունը և այնտեղ մնացած հայերը մի առժամանակ օգտւում էին ազատութեամբ, բայց վերջին 8—10 օրերի ընթացքում բոլոր ըրիստոնեաները կենտրոնացան Դիլմանում։ Այդպէս էր վճռուած իշխանութեան կողմից և պէտք էր հնազանդուել այդ կարգադրութեանը. Մենք զգում էինք, որ գտնւում ենք մի ինչ որ անախորժ հնարաւորութեան նախօրեակում, աշխատում էինք մեկնել մեր խմբման պատճառը... հազար ու մի երեակայութիւններ։ Ով կարող էր գուշակել, թէ ինչ է այդ հը՛շային գաղափարի նպատակը։ Մենք նման էինք անբան անասունների, որոնց մորթուելուց առաջ պահում, կերակրում են գէթ մի քանի օրով, միքանի ժամով, որպէսզի ժամանակ լինի սրելու բթացած դանակը և սուրը...

Հայաբնակ գիւղերում այլևս ոչ մի շունչ չէր մնացել. չէր մնացել նաև մեր գոյքը։ Բոլորն էլ թալանել ու կողոպտել էին քրդերը և պարսիկները, մենք զուրկ էինք ամեն ինչից, բայց ով կենթադրէր, որ մի երկու օրից յետոյ պիտի անխնայ կոտորեն մեր բոլոր եղբայրներին և այդպիսով զրկեն մեղ նաև մեր

կեանքից, Շատ տեղերից մեզ համոզում էին, որ օսմանեան պետութիւնը մի կրթուած սահմանադրական երկիր է, նամանաւանդ նրա քաղաքական և պատերազմական պաշտօնեաները, որ իբր թէ բոլորն էլ ուսման տէր անձնաւորութիւններ են և երբէք մարդասիրութիւնը ոտի տակ չեն տայ... Սակայն տեղի ունեցած եղեռնագործութիւնները, որ մտածուած են եղել նախապէս, տասնեակ տների, եկեղեցիների, գրադարանների, ուսումնարանների և շատ սրբատեղիների այրելն ու կործանելը մեզ ցնցեցին, հիասթափութիւն ընդմիշտ դէպի նրանց հաւատ ունենալը:

Ի զուր չէին մեր ենթադրութիւնները. մեր սրտերը ժամ առ ժամ ճմլում էին. զգում էինք, որ մեզ հետ վերջանալու է աշխարհը. Սակայն մենք աշխատում էինք մեզ պահել ուրախ մեր կանանց և երեխաների առաջ, ապացուցել, որ ոչ մի վտանգ չկայ և շուտով նախախնամութեան փրկարար ոյժը կազատէ մեր հեծեծանքից... Մեր ԱԵ եղած հոգեորականները քարոզում էին յոյս և հաւատ դէպի Աստուած, մենք խրախուսում, ամրապնդում էինք, թէ և շուկաները, վատ տրամադրութիւնը դէպի մեզ զգալի էր հետզհետէ: Մենք իմացանք, որ քրդերի թիւը Դիլմանում շատանում է և որ դոքա գալիս են Թասուի կողմից: Բացի այդ, յամառ լուրեր էին պտտում, որ Խօյի գեադուկի (լեռնացքի) մօտ օսմանցիք յաղթելով ոռւսներին՝ շատ գերիներ են բերում: Այդ բոլորը մեզ յսւսահատեցնում, ընկճում էր, բայց դարձեալ, դարձեալ կոչ էինք անում դէպի միակ Աստուած...

Մինչ այդ, ժամ առ ժամ շշուկները տարածում էին աւելի մեծ չափով, քան առաջ. պարսիկները, ըստ երկոյթին վհատուած էին: Արիւնարբու քրդերի աշ-

քերում կրակ էր վառւում. Նրանք վերին աստիճանի լարուած էին մեր մնացած քրիստոնեաների դէմ. Իէնց այդ պատճառով մենք աշխատում էինք փողոցներ դուրս չգալ, կամ միմիայն ամենաանհրաժեշտ դէպքերում։ Խօսում էին այն մասին, որ Սօֆիանի կոուից յետոյ սպանուած են անթիւ, անհամար քրդեր ու տաճիկներ։ Եւ կարծես թէ Դիլմանում գտնուող աւազակային վոհմակները այդ վրէժի լուծմանն էին պատրաստուում, թագցնելով մեզնից սակայն իրենց տրամադրութեան բուն նպատակը։ Մեզ արդէն յայտնի էր այն, որ մեր դժբաղդ եղբայրներից ու քոյրերից նոքա, որ գեկտեմբեր ամսի վերջերը հնարաւորութիւն չէին ունեցել փախչելու դէպ Դիլման, սպանուած են եղել տեղն ու տեղը գիւղերում բարբարոս քրդերի ձեռքով։ Դիտէինք այդ և սրտատրով սպասում էինք մեր ճակատագրին...

Վերջապէս մօտենում էր փետրուարի քաշներեքը։ Մի քանի օր առաջ տաճկական կառավարութեան կողմից հրաման արձակուեց, որպէսզի բոլոր քրիստոնեայ տղամարդիք հաւաքուեն Հաւթուան գիւղ զօրապետի կողմից «իդարա» ստանալու։ Ի՞նչ էր նշանակում այդ իդարան, ինչու պէտք էր գնալ Հ. գիւղ. ինչու միմիայն տղամարդիք, բայց ոչ կանայք և երեխայք ևս,—այդ հարցին մենք անկարող էինք ինքներս պատասխանել։ Միւս կողմից հրաման արձակուեց Դիլմանաբնակ պարսիկներին, որ նրանցից ոչ մէկը իրաւունք չունենայ սրանից յետոյ պահելու իր բնակարանի մէջ տղամարդ քրիստոնեաներին։ Ինչպէս վերեւում յիշեցի, մեր մէջ կային ահազին քանակութեամբ քրիստոնեաներ, փախած Ուրմիայից և ապաստանած Սալմաստում։ Նրանք ևս սպասում էին փրկա-

ըար լոյսին, որ միանգայն կազատէր մեզ այդպիսի  
անտանելի, զարհուրելի և դժուար նկարագրելի դրու-  
թիւնից։ Թէև մենք զգում էինք, որ ապրում ենք,  
բայց ինչ դաժան, ինչ սոսկալի կացութիւն...

Երեկոյ էր։ Մութը պատել էր աշխարհին։ Փողոց-  
ներում կեանք չկար։ Ամեն մարդ մտել էր իր տուն  
և ամուր կողպել դռները։ Ընդհանուր մեռելային  
դրութիւնը երբեմն միմիայն խանգարւում էր շների ոռ-  
նոցով և էշերի զուցով։ Երկնակամարի վրայ թէև  
աստղեր կային, բայց նոցա պլպլալը շատ թոյլ էր,  
իսկ մանրասարսուռ քամին ոչ աստղերին էր նայում  
և ոչ էլ մեր եղբայրներին խղճում։ Եւ ահա այդ  
ցրտին, ահ ու դողով լցուած, տասնեակ հայ ու ասորի  
տղամարդիք պատրաստում էին գնալ յիշեալ գիւղ։  
Այդ բոլորը կատարւում էր առանց որևէ աղմուկի...

Բայց ինչու երեկոյեան, — կը հարցնի ընթերցողը։  
Այդ հարցին պատասխան տալը, ըստ երկոյթին, կարող  
էին միմիայն այն տասքսան ասկեարները, որ թշուառ  
քրիստոնեաներին իրենց առջեկց քշելով լուռ ու մունջ  
տանում էին զարհուրելի սպանդանոց...

Առաւօտ էր։ Մենք ոչ մի լուր չունէինք մեր  
գնացած եղբայրների մասին, նոցա թիւը հարիւրից  
աւելի էր։ Կեղծ լուրեր էին տարածւում, որ իրը թէ  
ամբողջ Դիլմանը պիտի դատարկուի, Միմիայն միքանի  
օրից յետոյ պարզուեց, որ դատարկում էին միայն  
քրիստոնեաներին։ Եւ ինչ կարող էր անել անոյժ,  
անզէն, անպաշտպան քրիստոնեան, որ գտնւում էր  
տասնեակ հազարաւոր մահմեղականների մէջ, որոնք  
ձգտում էին իրենց արեան ծարաւի յագեցման։ Մեզ  
պատմում էին, որ Հ. գիւղում հայերին ու ասորինե-  
րին տրւում են ապրուստի ամեն մի յարմարութիւն

և որ շուտով բոլոր քրիստոնեաներին առանց սեռի  
և հասակի խորութեան կը զետեղեն յիշեալ գիւղում:  
Ցուզուած սիրտս թելադրում էր այլ բան, նամանա-  
ւանդ երբ երկըորդ, երրորդ և չորրորդ գիշերուայ  
տարածների մասին նաև ոչ մի լուր չստացանք:

Իմ բնագդումս աշխատում էր համոզեցնել, որ  
ինձ մնացածների հետ այս գիշեր պիտի տանեն մոր-  
թելու: Այդ դրութեան մէջ միակ մխիթարութեան  
բանը նա էր, որ կանանց և երեխաներին չէին տան-  
ջում, թէս խօսւում էր և այն մասին որ բոլորին  
պիտի տանեն մզկիթ մահմեդականութիւն ընդունել  
տալու... Այդ պատրաստւած ծրագիրը այլևս ստու-  
գութեան կարօտ չէ: Ինչ էր մնում մեզ անել փախչել,  
իհարկէ, եթէ հնարաւոր էր, փախչել ազատուելու:  
Եւ ահա այդ մտքի իրագործման համար ես սկսեցի  
մտածել: Դժուար էր այդ բանը, որովհետեւ բոլոր  
դարւազաների մօտ ասկեար պահապան կար: Մտածում  
էի, անվերջ մտածում...

Այդ երեկոյ ես պիտի միանայի մնացածներին...  
Երբ ես երեակայեցի այն բարբարոսութիւնները, որ  
սովորաբար տաճիկները ու բըդերը գործադրում էին  
հայերի վերաբերմամբ Տաճկաստանում, երբ յիշեցի  
Ռաֆֆիի նկարագրութիւնները այդ առթիւ Զալալէդ-  
դինում, ես ցնցուեցի, որոշեցի փախչել, հեռանալ,  
ազատուել...

Նոր էր մթնել: Հաւաքում էին քրիստոնեաներին:  
Մեր բնակարանը գտնուում էր ոչ հեռու Փ. գիւղի  
դարվագից: Ամենազգոյշ կերպով ես կտուր բարձրացայ:  
Ցըտի պատճառով այնտեղ ոչ ոք չ'կար, իսկ իմ հիւրընկալ  
պարսիկը տանը չէր: Սողալով անցայ հարեան տանիք-  
ների վրա, աշխատելով աննկատելի լինել մարդկան-

ցից, նամանաւանդ շներից։ Վերջապէս, սարսափելի ցեխոտւած հասայ դարվազի պատին։ Դուռը կողպէր, իսկ նրա մօտ պահակ չկար։ Ամենայարմարը այն էր, որ մտնէի պատի տակից անցնող առուակը... և ահա մօտ կէս ժամ կոիւ մղելով ցեխերի հետ, անցայ պատի միւս կողմը։ Ես զգացի փոքր ինչ թեթևութիւն, գտնուելով քաղաքապատ պարիսպներից դուրս։ Աստուած իմ, Աստուած, ինչքան լաւ, ինչքան հրաշագեղ բան է ազատութիւնը...

Սարսափելի սոված, ցեխոտուած, թրջուած որոշեցի գնալ հարեան պարսիկ գիւղը։ Եւ սաստիկ դողում էի ցըտից։ Քայլերս շտապեցրի և մօտ մէկ ու կէս ժամից յետոյ մտայ գիւղ։ Մի դռնից նկատեցի ճրագ։ Երկար բախում էի դռներ, սակայն ինձ արձագանք տւողները միայն շներն էին։ Վերջապէս տեսայ մի խոտի դէզ, մի կերպ պատսպարուեցի այնտեղ և դողալով ամբողջ գիշեր անցկացրի նրա մէջ։ Միւս օր առաւօտեան վաղ դուրս եկայ գաղանավայել օթեանիցս և հիւրընկալուեցի X պարսկի մօտ, որից իմացայ ոռւսական զօրքի Մուղանջուդ դալը և թնդանօթաձգութիւնների նշանակութիւնը։

\* \* \*

Սպանուած են Սալմաստում բարբարոսաբար հետեւելները.

1. Մահլամ. Յովսէփ Զաքարեան, Դանել Յունանեան, Յակոբ Իսրայէլեան, Հայրապեա Աւագեան, Պողոս Հայրապետեան, Տէր Վարդան, Ենօք Աւագեան, Հղանենց Մարտիրոս, Աւետիք Մանասէրեան, Պատրօնդաշի հայրը և եղբայրը, Մարգար (Սուսամբարի որդի),

Քիշմիշով Օհաննէս, Ճիլօ Աւետիք, Զօլախ Ղազար,  
Մարտիրոս Աղբակեցի, Դաւիթ Աղբակեցի, Կարապետ  
Սալվարեան, Գաւառցի Սաֆօ, Սաֆար Առաքելեան  
Սաֆարեան, Ղազանչի Վարդան, Նազար Շաթոյեան,  
Սայադ և իր որդին, Գաբրելը և իր որդին, Լոփողան  
Խաչօն, Դիւլիզանցի Սայադ. Մհտ. Ակոփ Աւագեան,  
Մոռլտած Սարգիս. 9 Աղբակեցիք, որք են Յարութիւն,  
Թոմաս, Ներսէս, Գրիգոր, Փիօշ, Ճավշին, Կոստօ,  
Ալօ (կամաւոր), Պետրոս:

2. Հաֆթվան. Նազար Բաբլոյեան, Ալլահվերդի  
Ֆրանգիւլեան, Յարութիւն Հախնազարեան, Խուղա-  
վէրդի Մելքօնեան, Խալաթ Ստեփանեան, սրա կինը,  
Թումա Սահակեան, Նիկողոս Ղևոնդեան, Վարդան  
Բաբլոյեան, Վարդան Փոխանեան, Աբրօ Մհտ. Բաբլոյ-  
եան, Սարգիս Սևոյեան, մայրը Խոռոմ, Մարիամ  
(Թաթոսենց), Խանգալդեանց Խաթուն, Գեահվար (օղե-  
գործ). Մհտ. Շահբազ Թաթոսեանց, կինը Լալա Մհտ.  
Սարգսեան, Ակոփ Խուղավէրդեան, Խաչատուր Մհտ.  
Աւագեան, Կարապետ Բաբայեան, Մկրտիչ Բաբայեան,  
Արամ Բարոյեան և Վահրամ Բարոյեան, Պետրոս Մար-  
տիրոսեան, Պետրոս Թարոյեան (Երկու աղբակեցիք  
սպանուած են սրա տան մէջ), Ամրան Այվագեանի  
որդին, Յարութիւն Ֆարմանեան, Օհաննէս Փոխանեան,  
Աւէտ Աւէտեան և Շալօ Յարութեան Աղբակեցիք,  
Մկրտիչ Մինասեան, Աղագիւլ Մինասեան: Սրանցից  
բացի սպանուած են 14 հոգի Աղբակեցիք:

3. Հին-Քաղաք. Վարդան Աւագեան, Գէորգ  
Օհաննէսեանց (Եվայենց), Խաչօ Սաֆօեան, Գասպար  
Օհաննէսեան, Օհաննէս Մխիթարեան, Գրիգոր Օհան-  
նէսեան (չախմախսաղ), Կարապետ Ակոփեան, Բաբա  
Խաչօյեան, Աղագիւլ Մինասեան, Օհաննէս Սարգսեան

(Ճարեցի), Բաբէ Բարսեղեան (Ասլանիկցի), Սանդրօ  
Գիւլնազարեան, Սամսոն Գիւլնազարեան, Վարդանցի  
Վըթանէս, Ոսկան Ակոփեան, Վարդան Ղարիբեան,  
Գասպար, Թաթոս, Մամբրէ և Միհրան Բիթլիսեցիք,  
Զարգար Աբէլ, Շաբօ Սարգսեան, Դանել Գրիգորեան,  
Կարապետ Մհտ. Օհաննէսեան, Միլզա-Աֆշալմ (Զար-  
բաշլս-Ռւլմիայ), Շմօն Խաչլոյեան, 6 ասորիք Արճի-  
Աղէսցի, Գուրիէլ և իւխաննա Փաթաւորցի:

4. Փայաջուկ. Բաղդասար Կոստանեան, Մհտ.  
Սարգիս, Մհտ. Հայրապետ, Խաչօ Հախվէրանցի,  
Զարգար Ներսէս, Կուզօ, Գէորք Հասոյեան, Գղիր  
Նազօ, Բաջի, Սալաթին Դրիգորեան, Բանաւշա, Խանէ,  
Վառօ, Ռեհան (Փէկէի կին), Գէորք Բաբայեան, Պետրոս  
Գէորգեան, Խաչօյենց մեծ հարսը, Եօթն եղբօր մայր,  
Մհտ. Ռուբէն Աջեմեանց (անյայտ է): Կան մօտ չորս  
հոգի անյայտ սպանուածներ:

5. Սառնա. Շահբազ Մանգասարեան, Նազար  
Աստուածատուրեան, Ղազար Մարտիրոսեան, Մնացա-  
կան Ղազարեան, Նազար Շաբօյեանց, Մկրտիչ Աւոեանց,  
Օհաննէս Սարգսեան, Սարգիս Աւետիսեան, Մելիքսէդ  
Գրիգորեան (Զէվաջուկցէ) որդին Յովսէփ, ԱլօԱղբա-  
կեցի, Մուսէսենց Ակօ, Գրիգոր Ապօյեան:

6. Ղալասար. Մարգար Հասրաթեան, Մանուկ  
Տէր-Օհաննեան, Բաղալ Գօղալեան, Խաչօ Հաֆթուանցի,  
Դաղէ:

7. Ախտախանա. Յարութիւն Խուղօյեան, Սալբի  
Խուղօյեան, Սարգիս Աւագեան, Հախվէրդի Խուղավէր-  
դեան, Աւետիք Խուղաւէրդեան և Նազլու Խուղաւէր-  
դեան:

8. Ղզլա. Ստեփան Տէր-Միհթարեան:

9. Ուլա. Երկու անձնաւորութիւններ (անյայտ):

Բացի յիշեալ հայ նահատակները կան 64 սպանուած ասորիք և 19 կորած անձնաւորութիւններ Ընդամէնը մօտ 260 հոգի:

Այդ թւում չի մտնում 1913 թ. դեկտեմբեր ամսին Ռւրմիայից Սալմաստ եկած փախստական քրիստոնեանների զոհերը, որոնք կազմում են մօտ 600 հոգի: Սոյն քահակին պիտի աւելացնել 1915 թւի ապրիլ ամսւայ Ռուս-տաճկական ընդհարման ժամանակ Դիլմանում և գիւղերում տուած զոհերը—թւով մօտ 110 հոգի, որոնցից 44-ը հայեր են.

Այդպիսով, եթէ չհաշուենք Սալմաստի ահոելի նիւթական քայքայումը, որ համաձայն ամենամանրամասն տեղեկութիւնների կազմում է մօտ 5 միլիոն ըուբլի, մենք կտեսնենք, որ պարսկահայի դրախտավայրը, հուր ու կրակի ենթարկուելով և ամայի դառնալով, տուեց հազարից աւելի զոհեր:

«Հանգիստ ձեզ, անմեղ եղեայրներ, հայրենիքի զոհեր»:

